ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

8 հոկտեմբերի շաբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

142
(2622)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 108

2018 թվականի օգոստոսի 17-ին, Հանրապետության հրապարակում հանրահավաք հրավիրելով, Նիկոլ Փաշինյանը ամփոփում է պաշտոնավարման 100 օրը: Փաշինյանը բազմաթիվ խոստումների թվում ասում է. «Հայաստանի Հանրապետությունում հեղափոխության քաղաքական հաղթանակից հետո մոտենում է, այսինքն՝ մենք թեւակոխել ենք տնտեսական հաղթանակների մի ժամանակաշրջան: Եվ ուզում եմ ձեզ հավաստիացնել, որ տնտեսությունում մենք իսկապես լրջագույն հաջողություններ ենք ունենալու: Տնտեսական աճի այն մոդելը, որ մենք այսօր ունենք, իհարկե, մեզ ձեռնտու չէ: Մենք ուզում ենք, որ տնտեսական աճի մոդելը փոխվի, որովհետեւ հասկանում ենք, որ դեռ շարունակում ենք մնալ այն հին մոդելի մեջ, երբ տնտեսական աճը քաղաքացիներն առանձնապես չեն զգում: Բայց ուզում եմ ասել, որ մենք հենց դա ենք փոխելու Հայաստանում»: Տնտեսական հեղափոխություն, իհարկե, տեղի չունեցավ: 2022 թվականին արդեն այս խոստումը լիովին տապալած Նիկոլ Փաշինյանը կառավարության նիստում հայտարարում է. «Ինչպես տեսնում ենք, վերջին 2 տարում գնաճային երկրաշարժեր են տեղի ունենում անընդհատ. առաջինը Քովիդն էր, երկրորդը՝ աշխարհաքաղաքական զարգացումները եւ Ուկրաինայում տեղի ունեցող իրադարձությունները: Այս առումով, այո՛, լավատեսական ոչինչ առջեւում չի սպասվում»: Այսինքն՝ իր պաշտոնավարման 100 օրվա կապակցությամբ ելույթ ունենալով եւ խոստումներ տալով՝ նա հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:



«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հոկտեմբերի 12-ին Սիսիանում տեղի է ունենալու նորընտիր ավագանու անդրանիկ նիստը: Հենց այդ նիստի ժամանակ պետք է նորընտիր ավագանին ընտրի համայնքի ղեկավար: Մենք տեղեկացանք, որ այդ օրը համայնքի ղեկավար չի ընտրվի: Ինչպես հայտնի է, Սիսիանի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում անցողիկ շեմը հաղթահարել է քաղաքական 5 ուժ, սակայն նրանցից ոչ ոք 50 տոկոսից ավելի ձայն չի ստացել, որպեսզի քաղաքի կառավարումը ստանձնի: Ընդհանուր առմամբ, ավագանին ունենալու է 21 մանդատ, իսկ համայնքի ղեկավար ընտրելու համար պետք է 11 ձայն, ըստ այդմ՝ ՔՊ-ն ունի 8 մանդատ, «Աշխատանք եւ արդարությունը»՝ 5 մանդատ, Արթուր Ղազինյանի կուսակցությունը՝ 2 մանդատ, եւս 2 մանդատ ունի Արման Բաբաջանյանի ուժը: «Ապրելու երկիր» կուսակցությունն էլ ունի 4 մանդատ: Եվ, ահա, մեր տեղեկություններով՝ առաջին նիստի ժամանակ ոչ ոք չի ընտրվի համայնքի ղեկավար, եւ ավագանու անդամները կգնան երկրորդ անգամ ընտրության: Մեր տեղեկություններով՝ նախնական որոշվել է, որ այդ օրը 4 ՔՊ-ական իր ձայնը տալու է «Աշխատանք եւ արդարություն» ուժի թեկնածու Հայկ Առաքելյանին: Բանն այն է, որ այդ ուժը Արթուր Ղազինյանի կուսակցության հետ միասին ունի 7 մանդատ, այսինքն՝ ընդդիմությունը ներկայացված է յոթ մանդատով, եւ եթե ՔՊ-ն 4 ձայն տա Հայկ Առաքելյանին, ապա հենց նա էլ կդառնա համայնքի ղեկավար: Հավելենք, որ Հայկ Առաքելյանը ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավոր, Սիսիանի նախկին քաղաքապետ Արթուր Սարգսյանի ընկերն ու թեկնածուն է, եւ նրան է սատարում նաեւ Արթուր Ղազինյանը:

Սեպտեմբերի 25-ին Կոտայքի մարզի Չարենցավան խոշորացված համայնքում անցկացված ՏԻՄ ընտրություններում հաղթանակ տարավ գործող համայնքապետ, կարկառուն ՀՀԿ-ական, Կոտայքի նախկին մարզպետ Կովալենկո Շահգալդյանի որդին՝ Հակոբ Շահգալդյանը: Այդ օրը, սակայն, ArmLur.am-ի տեղեկություններով, ընտրություններն այնքան էլ հարթ չեն անցել: Ուշագրավ է, որ մինչ այս ՔՊ-ականներն ամեն ինչ արել էին, որպեսզի հենց իրենց թեկնածուն՝ վերջերս ՔՊ-ական դարձած Արթուր Գալստյանն ընտրվեր: Քարոզարշավին անգամ Չարենցավան էին այցելել վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, ՊՎԾ պետ Ռոմանոս Պետրոսյանը, պատգամավորներ Արսեն Թորոսյանը, ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը: Եվ չնայած բուն ընտրությունների օրը պատգամավորներն այնտեղ երեւացող հատվածներում չէին, սակայն բավական ակտիվ էր հենց Հայկ Կոնջորյանի եղբայրը՝ Ավետ Կոնջորյանը: Ականատեսներն ArmLur.am-ին պատմեցին, որ ընտրությունների օրը նա բավականին ագրեսիվ պահվածքով է աչքի ընկել, ոչ միայն անհարգալից է եղել ՔՊ-ի մրցակիցների, այլ նաեւ համայնք ժամանած եւ ընտրությունները դիտարկող անկախ դիտորդների նկատմամբ: ArmLur.am-ը մի քանի օր շարունակ փորձում է հենց Ավետ Կոնջորյանից հասկանալ՝ ինչու է նման պահվածք դրսեւորել ընտրությունների օրը, վերջինս, սակայն, հակված չէ պատասխանել մեր հարցերին: Նախկին իշխանություններին մերժված բարքերի համար մեղադրող երիտհեղափոխականներն ու նրանց հարազատներն իրենց վարքով չեն տարբերվում նախկիններից, պարզապես նրանց պաշտոնն ու իշխանությունն էր անհասանելի:

Հշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունում մեծագույն խանդավառությամբ պատրաստվում են Երեւանի ավագանու ընտրություններին: Բոլորի աչքի առաջ ու առանց ավելորդ համեստությունների ՀՀ նախկին փոխվարչապետ, այժմ Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը երեւանցիների հետ հանդիպումների անվան տակ բացահայտ քարոզարշավ է իրականացնում կամ փորձում շոշափել մարդկանց տրամադրվածությունը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ իշխող ՔՊ-ում արդեն անգամ Ավինյանի նախընտրական շտաբի պետի հավանական թեկնածուին են քննարկում: Մեր տեղեկություններով՝ նա ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, առողջապահության նախկին նախարար Արսեն Թորոսյանն է: Թեեւ ՔՊ-ի ներսում ոչ բոլորն են ընդունում հանգամանքը, որ հենց Թորոսյանը պետք է ղեկավարի Ավինյանի շտաբը, բայց կարծես համակերպվել են այդ մտքի հետ: Եվ, առհասարակ, թեեւ մեկ տարի ժամանակ կա Երեւանի ավագանու ընտրություններին, բայց իշխանականները մի քանի թեւի ու թիմի են բաժանվել եւ ներքին պայքար են տանում, թե ում խոսքը պետք է վերջինը լինի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ի՝ վերին էշելոնի դեմքերն անում են հնարավորը, որ կարողանան իրենց ցանկալի անձանց ներառել ավագանու համամասնական ցուցակում: Այս օրերին, երբ հասարակությունը, շունչը պահած, ամեն պահի սպասում է, որ հակառակորդի հաջորդ արկը կարող է Երեւանի վրա ընկնել, իշխանականները քաղաքապետի ընտրության են պատրաստվում: Ինչ էլ սիրտ ունեն...

ԶԱԽՈՂՈՒՄՆԵՐ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԳՆՈՒՄ Է ԿԱՊԻՏՈՒԼՅԱՑԻԱՅԻ

Նիկոլ Փաշինյանն ԱԺ ամբիոնից կրկին հիշեց նախկիններին:

«Սերժ Սարգսյանը սեղանին թողել է կապիտուլյացիայի թուղթը եւ հեռացել է»,-ասում է Նիկոլ Փաշինյանը՝ հայտարարելով, որ գնալու է խաղաղության օրակարգի ճանապարհով:

ՀՀԿ ԳՄ անդամ Արտակ Զաքարյանը ArmLur.am-ի հետ զրույցում նկատեց, թե հերթական անգամ այդպիսի հայտարարություններ են արվում պատասխանատվությունն իր վրայից գցելու համար: ՀՀԿ փոխնախագահի խոսքով՝ Նիկոլ Փաշինյանը գնում է երկրորդ կապիտուլյացիայի:

-Պարոն Զաքարյան, Ազգային ժողովի ամբիոնից Նիկոլ Փաշինյանը կրկին հիշեց նախկիններին՝ ասելով, որ Սերժ Սարգսյանն է սեղանին թողել կապիտուլյացիայի փաստաթուղթ, խոսելով մադրիդյան սկզբունքների մասին: Ինչպե՞ս կարծագանքեք այս ամենին:

-Արձագանքները արդեն բավականին շատ են եղել, պարզապես կցանկանամ ուշադրություն գրավել, թե ինչպես է կապիտուլյանտը փորձում սվաղել իր բոլոր ձախողումները: Այս իրավիճակը, որում գտնվում է Հայաստանի Հանրապետությունը, բոլորովին ոչ մեկին իրավունք չի տալիս կեղծիքի միջոցով կործանել արդեն Հայաստանի պետականությունը: Ինչպիսի հայտարարություններ էլ որ եղել են Ազգային Ժողովի ամբիոնից կապիտուլյանտի կողմից, ամբողջությամբ կեղծիք են: Այդ խոսքերի կեղծիքի մասին վկայում են Մինսկի խմբի հայտարարություններում. դա հայտնի բանակցային ձեւաչափեր են միջազգային հարաբերություններում, դրան լուրջ վերաբերվելը համարում եմ ամենամեծ անլրջությունը: Նիկոլը շատ լավ հասկանում է, որ գնում է 2-րդ կապիտուլյացիային, որը շատ ավելի ծանր հետեւանքներ է ունենալու, քան 2020 թվականի նոյոմբերի 9-ի հայտարարություն ստորագրելն էր: Այս անգամ խնդիրը ավելի մեծ է, եւ այս ստորագրությունը մենակ իր ուսերին չի լինելու. այդտեղ պետք է Սահմանադրական դատարանի համաձայնությունը լինի, եւ այդ իսկ պատճառով նա դիմեց անգամ ժողովրդին, որ օգնեն իրեն այդ հարցում: Նա ասում է՝ հարգելի՛ մեծամասնություն, եկե՛ք բոլորս միասին անենք հաջորդ դավաճանությունը՝ մեր երեխանների, մեր պետության, մեր ապագայի եւ Արցախի դեմ ուղղված:

-Պարոն Զաքարյան, Դուք նշեցիք, որ Արցախի դեմ է ուղղված, բայց վերջերս անընդհատ նշվում է, որ պետք է Արցախը իր ներկայացուցիչների հետ բանակցի Ադրբեջանի հետ. մեր անվտանգության հայեցակարգում նշված է, որ Հայաստանն է հանդիսանում Արցախի անվտանգության երաշխավորը: Այս գործընթացով փորձ է արվում Արցախից վերջնականապես հրաժարվե՞լ:

-Այո, Արցախից իրենք արդեն վաղուց հրաժարվել են, հիմա պարզապես ցանկանում են դա ամրագրել: Այդ ամենը նշանակում է, որ մենք վտանգի տակ ենք դնում մեր հայրենակիցների անվտանգության հարցը: Դա նաեւ նշանակում է, որ մենք ամբողջությամբ Ադրբեջանին ենք թողնելու Արցախի ճակատագիրը: Ադրբեջանը անելու է հայաթափում, բնականաբար, եւ այդ ամենով չեն սահմանափակվելու. առաջինը մեծ վտանգի տակ են դնելու Հայաստանի սահմանները եւ Հայաստանի Հանրապետության բնակչին, որոնք հայտնվելու են անմիջապես թշնամու սպառնալիքի տակ: Կեղծավորությամբ այդ պայմանագրի անունը դնում են խաղաղության պայմանագիր, եւ մարդիկ միամտաբար նստած մտածում են, թե, վերջ, արդեն գնում են խաղաղության ճանապարհով: Խաղաղություն չի լինի այնպես, ինչպես խաղաղություն չեղավ 2021 թվականին: Ընտրություններում նա ասաց, որ խաղաղության օրակարգ են առաջ քաշում, սակայն դրանից հետո մենք կորցրեցին տարածքներ, մեծ թվով զինծառայողներ, ավելացավ մեր գերիների թիվը, եւ մեր զինված ուժերը կորցրեց մարտական հենակետեր:

-Պարոն Զաքարյան, ի՞նչ է լինելու այն 5 կետերից հետո, որ հրապարակվեց վերջերս: Այդ 5 կետերը Հայաստանի կապիտուլյացիա՞ն են ենթադրում:

-Միանշանակ կապիտուլյացիա է ենթադրում: Պատմության մեջ մինչեւ այսօր եղած ամենասարսափելի կապիտուլյացիան է ենթադրում, որը Հայաստանի հաջորդ իշխանություններին անգամ հնարավորություն չի տալու ոտքի կանգնել եւ շտկել այդ ամենը: Հայաստանի քաղաքացին Հայաստանում ապրելու ոչ մի հեռանկարներ այլեւս չի տեսնելու, եւ մենք ունենալու ենք նսեմացված, պետականությունը կորցրած մի տարածք, որտեղ ներդրվելու է թուրք-ադրբեջանական կապիտալը: Ցավոք սրտի, նրանք միջանցքի թեման անգամ չեն ուզում հանել շրջանառությունից եւ անգամ այդ միջանցքի վերահսկողությունը պատկերացնում են իրենց կողմից: Նիկոլն ինքն իր կամքով այս պահին հայտնվել է այդ փաստաթուղթը ստորագրելու ճանապարհին, պարզապես այս անգամ տարբերությունը միայն այն է, որ չի ցանկանում դավաճանը մենակ ինքը լինել, եւ ցանկանում է, որ հայ ժողովուրդը միանա այս դավաճանական քայլին, ինչը նշանակում է հայի համար ինքնասպանություն:

Զրուցեց ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ԵՐԿԿՈՂՄԱՆԻ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԱՉՈՒՄ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի եւ ԵԽ նախագահ Շառլ Միշելի՝ 2022 թվականի հոկտեմբերի 6-ին կայացած հանդիպումից հետո կողմերը հայտարարություն են տարածել, որի մի կետում ասվում է.

«Հայաստանն ու Ադրբեջանը հաստատեցին իրենց հանձնառությունը ՄԱԿ-ի կանոնադրությանը եւ 1991թ. Ալմա-Աթայի հռչակագրին, որոնց միջոցով երկու կողմերն էլ ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը»:

Իսկ ի՞նչ է ենթադրում հռչակագրի այս կետը:

Չնայած Ադրբեջանի պնդումներին՝ ԱՊՀ պետություններն իրականում ԱՊՀ հիմնադիր փաստաթղթերով չեն ընդունել խորհրդային սահմանների շարունակականությունը: ԱՊՀ հիմնադիր փաստաթուղթը եւ Ալմա-Աթայի հռչակագիրը խոսում են տարածքային ամբողջականության եւ տարածքների անքակտելիության մասին, որոնք բոլորովին այլ երեւույթ են:

Համաձայնագրի 5-րդ հոդվածում, մասնավորապես, ամրագրված է հետեւյալը. «Բարձր պայմանավորվող կողմերը ճանաչում եւ հարգում են միմյանց տարածքային ամբողջականությունը եւ համագործակցության շրջանակներում գոյություն ունեցող սահմանների անձեռնմխելիությունը»: Մեջբերումից պարզ է դառնում, որ խոսքը վերաբերում է նախկին ԽՍՀՄ անդամ պետությունների տարածքային ամբողջականությանը եւ սահմանների անձեռնմխելիությանը: Սակայն այստեղ ուշագրավ է, որ Ադրբեջանի Հանրապետության Գերագույն խորհուրդը 1991թ. օգոստոսի 30-ին ընդունել է «Ադրբեջանի պետական անկախության վերականգնման մասին» հռչակագիրը, իսկ նույն թվականի հոկտեմբերի 18-ին ընդունել է նաեւ «Ադրբեջանի պետական անկախության վերականգնման մասին» սահմանադրական ակտը: Թե՛ հռչակագրով եւ թե՛ սահմանադրական ակտով Ադրբեջանը հայտարարել է, որ ներկայիս Ադրբեջանի Հանրապետությունը հրաժարվում է Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդությունից եւ իրեն հայտարարում է 1918թ. մայիսի 28-ին հռչակված եւ մինչեւ 1920թ. ապրիլի 28-ը գոյություն ունեցած Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդը:

Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության կազմում Արցախը երբեք չի եղել:

Նկատենք՝ հենց Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը ճանաչելու մեջ էր ԱԺ ամբիոնից Նիկոլ Փաշինյանը մեղադրում նախկին իշխանություններին:

Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՊԵՏՔ Է ՎԵՐԱՆԱՅՎԻ

ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «ԵՊՀ արեւելագիտության ֆակուլտետի ուսանող, 44-օրյա պատերազմի կամավոր մասնակից, երեկ գիշեր կալանքից ազատված քաղբանտարկյալ Տարոն Մանուկյանին կրթության իրավունքից զրկելը անթուլատրելի է: Իհարկե, մայիսի 8-ին Գյումրու մերձակայքում արձանագրված տարեցների ծեծկրտուքը խիստ դատապարտելի է, բայց երբ այդ քրգործը դառնում է քաղաքական մահակ, եւս անկարելի է: Գիտեմ, որ տարեցների գերակշիռ մասը երիտասարդների դեմ բողոք չեն ներկայացրել, ինչը հանրային համերաշխության կարող էր բերել, որը պետք է խրախուսել, այլ ոչ թե շարունակել թշնամանք սերմանել: Բայց մայր բուհի պահվածքը այս իրավիճակում խիստ տարակուսելի է: Երբ Արեւելագիտության ֆակուլտետի դասախոսները պատրաստակամություն են հայտնել անգամ կալանավայր գնալ եւ այնտեղ քննություններ ընդունել Տարոն Մանուկյանից, մերժում են ստացել, մեկ բանի մասին է վկայում. հրահանգ կա քաղաքական այլախոհին զրկել կրթության իրավունքից: Կարծում եմ՝ ԵՊՀ-ն պետք է վերանայի իր որոշումը եւ հնարավորություն տա ուսանողին շարունակել կրթությունը: Ուզում եմ հիշեցնել, որ Նիկոլ Փաշինյանը, որը ժամանակին խրախուսում էր քաղաքական հայացքների արտահայտումը նաեւ կրթական հաստատություններում, ու ինքն էլ գնում էր հենց այդ ճանապարհով, այսօր ոչ միայն մերժում է, այլեւ պատժում իր քաղաքական հայացքները չկիսողներին: ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի 1-ին մաս. «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք»: Ու սա քննարկման ենթակա չէ»:

ԿՐԱԿՈՑՆԵՐ ԵՂԵԼ ԵՆ

«Ինտենսիվ կրակոցներ չեն եղել, կրակոցներ են եղել, բայց զոհեր, վիրավորներ չկան»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասաց Պաշտպանության նախարարության քարտուղար Արամ Թորոսյանը: Նշենք, որ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրել էր. «Գեղարքունիքի սահմանապահ դարձած բնակավայրերից Կուտականի բնակիչները քիչ առաջ ահազանգեցին, որ թշնամին այսօր առավոտից՝ ժամը 9:00-ից մինչ այժմ, որոշակի դադարներով հրաձգային զինատեսակներից կրակ է բացում տեղի հայկական դիրքերի ուղղությամբ: Փաստորեն, որեւէ հայտարարություն կամ հանդիպում Ադրբեջանի պլանները չեն փոխում. նրանք խաղաղության պատրաստ չեն:Ուզում եմ հիշեցնել, որ Կուտականի բնակիչները գտնվում են ադրբեջանցիների տեսադաշտում: Իսկ այս պահին ընթանացող փոխհրաձգության, զոհերի, վիրավորների մասին դեռ պաշտոնական տեղեկություն առկա չէ»: Հավելենք, որ ArmLur.am-ը զրուցել էր նաեւ Կուտականի վարչական ղեկավար Մակիչ Թովմասյանի հետ, որը նույնպես հաստատել էր, որ գյուղում կրակոցներ եղել են, տեւել է մոտ մեկ ժամ:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի եւ ԵՄ նախագահ Շառլ Միշելի՝ 2022 թվականի հոկտեմբերի 6-ին կայացած հանդիպումից հետո կողմերը հայտարարություն են տարածել, որի մի կետում ասվում է. «Հայաստանն ու Ադրբեջանը հաստատեցին իրենց հանձնառությունը ՄԱԿ-ի կանոնադրությանը եւ 1991թ. Ալմա-Աթայի հռչակագրին, որոնց միջոցով երկու կողմերն էլ ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը»: Մյուս կետում ասվում է. «Հայաստանն իր համաձայնությունը հայտնեց՝ խրախուսելու ԵՄ քաղաքացիական առաքելությունը Ադրբեջանի հետ սահմանի երկայնքով: Ադրբեջանը համաձայնեց համագործակցել նշյալ առաքելության հետ այնքանով, որքանով որ առնչություն կունենա»:

Նկատենք՝ երեկ՝ մինչեւ այս հանդիպումը, իր առաջարկներ ներկայացնելու մասին հայտնել էր պաշտոնական Մոսկվան: Մասնավորապես, ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչ Մարիա Զախարովան հայտնել էր, թե Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղ պայմանագրի կնքման համար ՌԴ-ի համապարփակ առաջարկները փոխանցվել են Հայաստանին եւ Ադրբեջանին: Սակայն ռուսական կողմի առաջարկների մասին մանրամասներ այդպես էլ չէր նշվել, եւ դատելով երեկվա հայտարարությունից՝ դրանք, բնականաբար չեն ընդունվել:

Իսկ ի՞նչ առաջարկների մասին է խոսքը:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ պաշտոնական Մոսկվան առաջարկել է Ադրբեջանի հետ սահմանի երկայնքով տեղակայել կամ ռուս, կամ ՀԱՊԿ քաղաքացիական առաքելություն. այս առաջարկին, սակայն, Հայաստանը դեմ է եղել, Ադրբեջանը՝ ոչ այնքան: Մյուս կետով էլ ՌԴ-ն առաջարկել է չճանաչել Արցախը որպես Ադրբեջանի մաս, սակայն տեւական ժամանակով մոռանալ Արցախի որեւէ կարգավիճակի մասին:

Հավելենք, որ Պրահայից Նիկոլ Փաշինյանը մեկնելու է Սանկտ-Պետերբուրգ, Հայաստանից ՌԴ է մեկնում նաեւ ՀՀ ԱԺ պատվիրակությունը:

ԱՆՀԱՆԳՍՏԱՑՆՈՂ ԱԶԴԱԿՆԵՐ

Հայաստանի եւ Ադրբեջանի իշխանությունները երկու տարի անց կյանքի են կոչում իրենց նախկին հայտարարությունները: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում նշեց Արցախի ԱԺ պատգամավոր Մետաքսե Հակոբյանը՝ խոսելով երեկվա քառակողմ հանդիպման մասին, որով կողմերը հայտարարել են, թե ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը:

«Ամբողջ խնդիրը նրանում է, թե ինչպես են ճանաչում: Երեկվա ազդակները շատ անհանգստացնող են, եւ քաղաքական վեկտոր է ուղղվել դեպի Արեւմուտք, Եվրոպա, եւ Նիկոլ Փաշինյանն ամեն ինչ անում է, որ Հայաստանը դեմքով շրջվի Ռուսաստանից: Չկա, չենք տեսնում այն փաստաթուղթը, որով դա ճանաչվելու է: Որ իրենք բանավոր են ասում, թե Արցախին չի առնչվում, ուրեմն խաբեություն է: Եթե առանձին կետ չլինի, ուրեմն Հայաստանն Արցախը ճանաչում է Ադրբեջանի մաս», -նշեց նա:

ԿԵՂԾ ԵՆ

ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ ԽԱՐՏԻԱՆ ՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը յուրաքանչյուր ելույթի ժամանակ չի մոռանում անդրադառնալ նախկիններին՝ նրանց մեղադրելով ամենատարբեր մեղքերի համար: Խորհրդարանում իր վերջին ելույթի ժամանակ Նիկոլ Փաշինյանը կրկին հիշեց Ստամբուլյան խարտիան՝ ասելով, թե հենց այդ ժամանակ են ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին ու այն ժամանակ արտգործնախարար Վարդան Օսկանյանը հանձնել Արցախն Ադրբեջանին:

«Ռոբերտ Քոչարյանն էլ 98 թվին, իշխանությունը ստանձնելու նախապայման որպես, Ղարաբաղը դուրս է թողել բանակցային գործընթացից՝ դրանով դնելով անկյունաքարը, եւ գնացել է, Ստամբուլյան խարտիան վավերացրել է, որտեղ ասվել է, որ ...Ես էս ամբիոնից մեջբերել եմ կտորներ ամբողջական էդ փաստաթղթերից, որտեղ ասվում է, որ Եվրոպայում անվտանգության խարտիան վավերացնելով՝նրանք ասել են, որ այդ թվում երկրներում ապրող ժողովուրդների իրավունքները եւ ազատությունները ոչ միայն չեն խաթարում, այլեւ, ընդհակառակը, ամրապնդում են տարածքային ամբողջականությունը եւ սուվերենությունը: Էս իրենք են ստորագրել իրենց կոտրած ձեռքերով, թող չփորձեն մեզ վրա որեւէ բան բարդել», - ասել է Փաշինյանը:

Սակայն, ի հեճուկս դրա, Լեռնային Ղարաբաղին վերաբերող մասում որեւէ խոսք չկա տարածքային ամբողջականության սկզբունքի մասին: Ավելին՝այս սկզբունքը վկայակոչված չէ բացառապես Ղարաբաղին վերաբերող հատվածում, հետխորհրդային տարածքում մյուս հակամարտությունների դեպքում դրանց հանգուցալուծման հիմքում դրված էին եւ՛ ինքնիշխանության, եւ՛ տարածքային ամբողջականության սկզբունքը:

Փաշինյանը դեռ նախորդ տարվա հունիսի 5-ին՝ խորհրդարանական արտահերթ ընտրությունների նախընտրական հանդիպումներից մեկի ժամանակ, անդրադարձել էր 1999-ին Քոչարյանի ստորագրած Ստամբուլյան փաստաթղթին եւ մասամբ մեջբերելով փաստաթղթի 19-րդ հոդվածը՝ պնդել, թե հռչակագիրը արձանագրում է Լեռնային Ղարաբաղի կարգավորման հարցը Ադրբեջանի կազմում:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ Ռոբերտ Քոչարյանն իրենց ելույթներում հղում են անում փաստաթղթի տարբեր հատվածների: Այսպես, Փաշինյանը մեջբերել է յոթ գլխից բաղկացած Ստամբուլյան փաստաթղթի առաջին մասի՝ «Եվրոպական անվտանգության խարտիայի» 19-րդ կետը, այն էլ՝ դրա մի մասը՝ համատեքստից (կոնտեքստից) կտրված:

Արձանագրենք, որ հոդվածը վերաբերում է մարդու հիմնարար իրավունքներին եւ գոյություն ունեցող պետություններում փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը, իսկ Ղարաբաղյան խնդրի եւ հակամարտության մասին որեւէ առանձին խոսք չկա: Փաստացի «դիվանագիտական լեզվից» Փաշինյանի կամայական թարգմանությունը համատեքստից կտրված է եւ մոլորեցնող:

Քոչարյանը, հերքելով Փաշինյանի եւ Սիմոնյանի մեղադրանքները, իր հերթին մեջբերել է փաստաթղթի մյուս մասի՝ «Ստամբուլի գագաթնաժողովի հռչակագրի» կետերը:

Ստամբուլյան գագաթնաժողովի հռչակագրում ավելի հստակ անդրադարձ կա հետխորհրդային տարածքում երկրների միջեւ տարածքային վեճերին եւ հակամարտություններին: Դրանցով ԵԱՀԿ-ն իր դիրքորոշումն է հայտնում Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության (Սերբիա եւ Չեռնոգորիա) (4-րդ կետ), Բոսնիա եւ Հերցեգովինայի (6-րդ կետ), Վրաստանի (15-րդ կետ), Մոլդովայի (18-րդ կետ) եւ Ռուսաստանի Դաշնության (23-րդ կետ) տարածքներում կոնֆլիկտների մասին եւ մատնանշում դրանց հանգուցալուծումների գործընթացում ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության սկզբունքները:

Այսպիսով, Ռոբերտ Քոչարյանի պնդումը, որ Ստամբուլյան փաստաթղթում՝ Ղարաբաղյան հակամարտությանը վերաբերող պարբերությունում, ի տարբերություն հետխորհրդային տարածքում այլ կոնֆլիկտների, չի մատնաշվում տարածքային ամբողջականության սկզբունքը, ճիշտ է:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԳԵՐԻՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁ

«Ադրբեջանում ապօրինի պահվող հայ ռազմագերիները ենթարկվում են խոշտանգումների եւ նվաստացման: Այժմ էլ նոր տեսանյութում ցուցադրվում են սառնասրտորեն իրականացվող մահապատիժներ: Սրանք ռազմական հանցագործություններ են»,- իր միկրոբլոգում գրել է ԱՄՆ կոնգրեսական Ադամ Շիֆը՝հավելելով, որ ԱՄՆ-ն պետք է պատասխանատվության ենթարկի Ադրբեջանին:

«Բոլոր հայ ռազմագերիները պետք է ապահով տուն վերադարձվեն հենց հիմա»,- շեշտել է Շիֆը:

ԴՐԱԿԱՆ ՉԱՐՁԱԳԱՆՔԵՑ

«Պրահայում եւս մեկ անգամ վերահաստատեցի տարածաշրջանային կոմունիկացիաների ապաշրջափակման մասին մեր առաջարկը:.. Ադրբեջանը դարձյալ դրական չարձագանքեց: Կրկնում եմ՝ Հայաստանը պատրաստ է տարածքային կոմունիկացիաների ամբողջական ապաշրջափակմանը՝ հարգելով մեր ինքնիշխանությունը եւ օրենսդրությունը»,-գրել է



Փաշինյանը: Հիշեցնենք, որ երեկ կայացել է Հայաստանի, Ադրբեջանի, Ֆրանսիայի եւ ԵՄ ղեկավարների հանդիպումը, ինչից հետո հայտարարություն էր տարածվել այն մասին, որ Հայաստանի ու Ադրբեջանի նախագահները պայմանավորվել են ճանաչել երկու երկրների տարածքային ամբողջականությունը, իսկ սահմանի հայկական կողմում ԵՄ քաղաքացիական առաքելություն է տեղակայվելու:

Առաքելությունն իր աշխատանքները կսկսի հոկտեմբերին առավելագույնը երկու ամիս ժամկետով:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՏԱԽԱՉԻ ԲՈՂՈՔԸ ԲԱՎԱՐԱՐԵԼ Է

2022 թվականի հունիսի 7-ին Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում էր կայացրել առանձնակի դաժանությամբ սպանության համար մեղադրվող Կ. Ք.-ի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու եւ վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց գրավ ընտրելու մասին: Գրավի չափ էր սահմանվել 15 մլն դրամը, որը 2022թ.-ի հունիսի 16-ին վճարվել էր, եւ ամբաստանյալը ազատվել է արգելանքից:

Հիշեցնենք, որ դեռեւս 2019 թ.-ի հունվարի 15-ին որովայնի շրջանի հրազենային վիրավորումով, ձախ ականջի ամպուտացիայով եւ աջ ականջի կտրած վերքով, ագոնալ վիճակում «Սպիտակի բժշկական կենտրոն» էր տեղափոխվել 1978 թ.-ին ծնված Գ.Մ-ն, որը, գիտակցության չգալով, մահացել էր: Դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում ձերբակալվել էր Կ.Ք.-ն: Նախաքննության մարմնի՝ 2019 թ. հունվարի 18-ի որոշմամբ նա ներգրավվել էր որպես մեղադրյալ, եւ նրան մեղադրանք էր ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով եւ 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ որպես խափանման միջոց ընտրելով կալանավորումը:

Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հունիսի 7-ի որոշման դեմ մեղադրողի կողմից 2022թ.-ի հունիսի 24-ին բերվել է վերաքննիչ բողոք՝ փաստելով, որ՝

-չի նվազել ամբաստանյալ Կ.Ք.-ի կողմից վկաների վրա անօրինական ազդեցություն գործադրելու հանգամանքը,

-հանցանքի ծանրությունը եւ պատժի խստությունը կարող են անձին դրդել թաքնվել քննությունից կամ խոչընդոտել գործով ճշմարտության բացահայտմանը (Կ. Ք.-ին մեղսագրվող արարքի համար որպես պատիժ նախատեսված է միայն ազատազրկման ձեւով՝ տասներկուսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկում),

-բացի այդ, մինչ օրս հանցագործության գործիք հանդիսացած ակոսափող ատրճանակն ու դանակը չեն հայտնաբերվել, հետեւապես որեւէ կերպ չի նվազել նաեւ ամբաստանյալի կողմից գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու ռիսկը, ինչը ոչ իրավաչափորեն հաշվի չի առնվել առաջին ատյանի դատարանի կողմից:

Բողոքաբերը գտել է, որ ամբաստանյալ Կ. Ք.-ի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու մասին դատարանի որոշումը թերեւս հենց միայն կալանավորման մատնանշված հիմքերն անտեսելու առումով առերեւույթ հիմնավոր չէ:

Նշվածի համատեքստում, առանձին ուշադրություն է հրավիրվել նաեւ Կ. Ք.-ի անձի եւ նրան մեղսագրված արարքի ծանրության աստիճանի մասին օբյեկտիվ պատկերացում կազմելու համար էական նշանակություն ունեցող հետեւյալ հանգամանքներին՝

-հանցանքը կատարվել է հրազենով եւ դանակով զինված խմբի կազմում, առանձին դաժանությամբ,

-հանցանքը կատարվել է հանրային նշանակության հաստատությունում՝ ապահովագրական ընկերության գրասենյակում,

-տուժողի նկատմամբ դրսեւորել է առանձին դաժանություն, մասնավորապես՝ դանակով կտրել է արդեն իսկ հրազենային վիրավորումներ ստացած եւ օգնություն աղերսող տուժողի ականջախեցիները, ընդ որում՝ ամպուտացնելով ձախ ականջախեցին եւ այլն:

Այսպիսով, ներկայացվել է, որ տվյալ դեպքում առկա են այնպիսի ծանրակշիռ փաստական տվյալներ, որոնք բացառում են ազատության մեջ մնալու դեպքում ամբաստանյալի պատշաճ վարքագծի ապահովման հնարավորությունը, եւ նման պայմաններում փաստ է, որ միայն կալանավորման ձեւով նախատեսված խափանման միջոցով է հնարավոր վարույթի շրջանակներում ապահովել նրա պատշաճ վարքագիծը, իսկ այլ խափանման միջոցները, այդ թվում՝ գրավը, չեն կարող լինել պիտանի, ունենալ զսպող ազդեցություն եւ ի զորու չեն ամբաստանյալին հետ պահել ոչ պատշաճ վարքագիծ դրսեւորելուց:

Վերաքննիչ քրեական դատարանը, քննության առնելով մեղադրողի բողոքը, ամբողջությամբ համաձայնելով բերված բողոքի հիմնավորումներին, 2022 թվականի հոկտեմբերի 6-ին որոշում է կայացրել առաջին ատյանի դատարանի 2022 թվականի հունիսի 7-ի թիվ ԼԴ2/0085/01/19 որոշումը՝ ամբաստանյալ Կ. Ք.-ի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու մասին, բեկանել, իսկ ամբաստանյալի պաշտպանի միջնորդությունը մերժել՝ ամբաստանյալին ազատ արձակելու հնարավորությունը ճանաչելով անթույլատրելի:

ԼՈՒՐԵՐ

ԱՐԳԵԼԱՓԱԿՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

Հոկտեմբերի 7-ին՝ ժամը 09:16-ին, Երեւանի Բագրատունյաց պողոտայում՝ Երեւանյան լճի մոտակայքում, տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար. եղել են արգելափակված քաղաքացիներ:

Արտակարգ իրավիճակների նախարարությունից հայտնում են, որ դեպքը տեղի է ունեցել, երբ Volkswagen Golf մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի հատվածից եւ բախվել կայանած Ford Transit մակնիշի ավտոմեքենային:

Դեպքի վայր են մեկնել ԱԻՆ ՓԾ Երեւան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ եւ փրկարարական ուժերի վարչության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի փրկարարական խումբը:

Volkswagen Golf մակնիշի ավտոմեքենայի վարորդը եւ ուղեւորը ավտոմեքենայից դուրս են բերվել տեղի ուժերով մինչ փրկարարների հասնելը:

Փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենան եւ տուժածներին մոտեցրել շտապօգնության ավտոմեքենային. վերջիններս հոսպիտալացվել են:

ՀԱՆՑԱԳՈՐԾԸ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում շարունակվում է Նուբարաշենի 41-ամյա բնակչուհու սպանության դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Քննչական եւ վարութային անհետաձգելի գործողությունների, ինչպես նաեւ ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների հետ համատեղ իրականացված մեծածավալ միջոցառումների արդյունքում առերեւույթ հանցագործություն կատարած 37-ամյա տղամարդը հայտնաբերվել եւ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով ձերբակալվել է:

Ավելի վաղ տեղեկացրել էինք, որ Նուբարաշենի 41-ամյա բնակչուհին կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքները ստացել է 37-ամյա իր ծանոթի հետ անձնական հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ: Նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ Արամ Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա հրկիզման եղանակով վնասելու դիտավորությամբ 21.03.2022թ.-ին՝ ժամը 12:45-ին, գնալով «Աշտարակ բժշկական կենտրոն» ՓԲԸ շենքի բակ, իր հետ նախապես տարած քիմիական լուծիչը լցնելով Արա Դալլաքյանին պատկանող «Կիա» մակնիշի 02ZM001 համարանիշի ավտոմեքենայի վրա, հրկիզել է այն եւ հեռացել, սակայն իր կամքից անկախ հանգամանքներում հանցագործությունն ավարտին չի հասցրել, քանի որ տեղում հավաքված քաղաքացիների միջամտությամբ մարվել է բռնկված կրակը եւ ավտոմեքենայի այրման արդյունքում Ա. Դալլաքյանին պատճառվել է գույքային վնաս:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ ՄԱՀԱՑԵԼ Է

Հոկտեմբերի 6-ին հիվանդանոցից հաղորդում էր ստացվել, որ հրազենային վնասվածքով բուժօգնության է տեղափոխվել Արագածոտնի մարզի Ոսկեվազ գյուղի բնակիչ 31-ամյա տղամարդ:

ՀՀ ոստիկանությունից հայտնում են, որ ոստիկանության Աշտարակի բաժնի ծառայողները ձեռնարկած միջոցառումների արդյունքում պարզել են, որ Արագածոտն-Կոշ ճանապարհին իր «ԳԱԶ-53» մակնիշի մեքենայի սրահում 31-ամյա երիտասարդը համագյուղացու «ՏՕԶ 63» որսորդական ողորկափող հրազենից անզգուշաբար կրակել է իր ոտքին:

31-ամյա երիտասարդը հիվանդանոցում մահացել է: Հրազենը վերցվել է: Հանգամանքները պարզվում են: Նախաձեռնվել է քրեական վարույթ:

ԱՊՕՐԻՆԻ ՈՐՍ

Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ու «Հայանտառ» ՊՈԱԿ-ի աշխատակիցներն ապօրինի որսի կանխարգելման միջոցառումների շրջանակում իրականացրել են շրջայցեր:

ՊՈԱԿ-ից հայտնում են, որ հոկտեմբերի 4-ին «Հրազդան անտառտնտեսություն» մասնաճյուղի Քյարամամադի ձորի տարածքում հայտնաբերվել է անհայտ անձի կողմից տեղադրված մետաղալարե, ինքնաշեն, արջ որսալու համար նախատեսված 2 թակարդ:

Տեսչական մարմնի Կոտայքի տարածքային բաժնի աշխատակիցները թակարդները հանել եւ առգրավվել են: Գործի նյութերն ուղարկվել են իրավապահ մարմիններին: Խստացված վերահսկողական աշխատանքները շարունակվում են:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 6-ից 7-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 61 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԵՐԻԿԱՄԻ ՎԱՃԱՌՔ

Բերդ խոշորացված համայնքի Այգեձոր գյուղի բնակիչ, 1982 թվականին ծնված Համբարձում Օրդյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2021 թվականի հոկտեմբերի 13-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, Տավուշի մարզի Վազաշեն գյուղին հարակից տարածքի անտառամիջյան հատվածում, նախկինում ունեցած 640 000 ՀՀ դրամ պարտքը վերադարձնելուն որպես այլընտրանք, Բերդ համայնքի Այգեձոր գյուղի բնակիչ Խաչատուր Սուլյանի կողմից իր կնոջ հետ սեռական հարաբերություն ունենալու կամ երեխայի երիկամներից մեկը վաճառելու շուրջ մտածելու առաջարկի շուրջ առաջացած վիճաբանության ժամանակ փայտով հարվածել է Խաչատուր Սուլյանի գլխի ձախ հատվածում, որի հետեւանքով վերջինս վայր է ընկել եւ գլորվել առվի մեջ: Այնուհետեւ Համբարձում Օրդյանը փորձել է օգնել Խաչատուր Սուլյանին դուրս գալ առվից, սակայն վերջինս, սեռական հայհոյանքներ տալով, ձեռքի դանակը թափահարել է, սպառնացել է ոչնչացնել Հ. Օրդյանին, այնուհետեւ փայտով հարվածել է վերջինիս ձախ դաստակին, որից հետո Հ. Օրդյանը կրկին փայտով հարվածել է Խաչատուր Սուլյանի գլխին, որի հետեւանքով վերջինս բերանքսիվայր ընկել է առվի մեջ, իսկ Հ. Օրդյանը առվից քար է վերցրել եւ ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ դրանով հարվածել է Խաչատուր Սուլյանի գլխի ծոծրակային հատվածում: Տեսնելով, որ վերջինս անշարժացավ, դիմել է փախուստի: 7-ամյա կրթությամբ, խնամքին մեկ անչափահաս երեխա ունեցող Համբարձում Օրդյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասով (Սպանությունը), նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը:

ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի դասընկեր, մանկության ընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի կողմից 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը ուսուցչի օրվա առթիվ շնորհավորական ուղերձում գնահատանքի եւ բարեմաղթանքներ է հղել ուսուցիչներին, ուր այսպիսի խոսքեր կան. «Գաղտնիք չէ, որ հենց ուսուցչին է վերապահված մեր հայրենիքի վաղվա օրվա ձեւավորման առաքելությունը, ինչը դուք կատարում եք պատվով, անտրտունջ, երբեմն նույնիսկ՝ ոչ դյուրին պայմաններում»: Ուսուցիչներն իսկապես անտրտունջ են աշխատում, տարիներ շարունակ նրանց ցածր աշխատավարձերը չեն բարձրացնում, իսկ Տավուշի մարզպետարանի պաշտոնյաները, իրենց բարձր աշխատավարձից զատ, այս տարի պետական բյուջեից 88 միլիոն 92 հազար 700 դրամ պարգեւավճար են ստանալու: Սահմանամերձ Բերդավանի, Ոսկեվանի, Արծվաբերդի, Սարիգյուղի եւ բազում այլ դպրոցների շենքերը նորոգման կարիք ունեն, սակայն այդ նպատակով գումարներ չեն հատկացվում, պետական բյուջեն մսխվում է պաշտոնյաներին պարգեւավճարներ բաժանելու վրա:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

7500 ՔԱՂԱՔԱՑԻ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

2021 թվականի հունվարի 1-ից հանրակրթական ուսհաստատությունների մանկավարժներն ու սովորողներն օգտվում են ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների մանկավարժներին եւ դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցումից:

2021 թ. փոխհատուցման կարգից օգտվել են 5030 մանկավարժ եւ 2769 դպրոցահասակ սովորող, փոխհատուցվող տրանսպորտային ծառայությունների ծախսը կազմել է 401 մլն 578 հազար ՀՀ դրամ: 2022 թ. մեկ կիսամյակում կարգից օգտվել են 5096 մանկավարժ եւ 2492 սովորող, ծախսը կազմում է 188 մլն 365 հազար ՀՀ դրամ: Այսինքն՝ պետական աջակցության այս ծրագրից տարեկան միջին հաշվով օգտվում է շուրջ 7500 քաղաքացի: Հիշեցնենք, որ մանկավարժների եւ սովորողների համար 2021 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած փոփոխություններով սահմանվել են՝

-փոխհատուցվում է սովորողների տրանսպորտային ծառայությունների ծախսը՝ անկախ հեռավորությունից, եթե աշակերտը, իր փաստացի բնակության վայրում ուսումնական հաստատության բացակայությամբ պայմանավորված կամ առկա հաստատությունում տվյալ կրթական ծրագրի բացակայությամբ պայմանավորված, ուսումը ստանում է այլ բնակավայրի կրթական հաստատությունում: Նախկինում հատուցումը տրվում էր միայն այն դեպքերում, եթե բնակավայրերի միջեւ հեռավորությունն առնվազն 3 կմ էր:

-Մանկավարժները (այդ թվում՝ դասավանդող նախնական զինվորական պատրաստության եւ անվտանգ կենսագործունեության ուսուցիչները՝ զինղեկները) փոխհատուցման կարգից կարող են օգտվել 0,5 եւ ավելի հաստիքով աշխատելու դեպքում: 0,5-ից ավելի հաստիքային դրույքի սահմանափակումը չի տարածվում ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների ցանկում ընդգրկված բնակավայրերի դպրոցների ուսուցիչների, ինչպես նաեւ տվյալ հաստատությունում դասավանդվող տվյալ առարկայի գծով միակ ուսուցիչը հանդիսացող ուսուցիչների վրա:

-Ամսական փոխհատուցման առավելագույն չափը յուրաքանչյուր ուսուցչի եւ դպրոցահասակ երեխայի համար ավելացվել է՝ նախկին 15000-ի փոխարեն դառնալով 20200 ՀՀ դրամ:

-Միկրոավտոբուսային եւ ավտոբուսային երթուղի լինելու դեպքում փոխհատուցման գումարը տրվում է համապատասխան երթուղիների համար սահմանված սակագների չափով: Միկրոավտոբուսային եւ ավտոբուսային երթուղիների բացակայության դեպքում՝ յուրաքանչյուր կմ-ի համար 25 ՀՀ դրամ՝ բայց ոչ պակաս 200 ՀՀ դրամը:

-Եթե բացակայում է միկրոավտոբուսային կամ ավտոբուսային երթուղին, եւ տվյալ բնակավայրից տրանսպորտային փոխհատուցման ծառայություններից օգտվող երեխաների եւ ուսուցիչների թիվը փոքր է չորսից (այսինքն՝ ենթադրաբար, անգամ համատեղ տաքսուց օգտվելու տարբերակը արդյունավետ չի լինի), ապա այս դեպքում տրամադրվող փոխհատուցման չափը կկազմի նվազագույնը 1000 ՀՀ դրամ՝ ներկա ստացած յուրաքանչյուր օրվա համար: Այս գումարը հավասար բաժանվում է բոլոր օգտվողներին:

Նշենք, որ 2022 թվականից կարգով նախատեսված փոխհատուցումները ստանում են նաեւ ուսուցչի օգնականները եւ հատուկ մանկավարժները:

ԼՈՒՐԵՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՎԵԼ ԵՆ

ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմինը «Փեթակ» ՍՊ ընկերության աշխատանքները դադարեցնելու որոշում է կայացրել՝ վերստուգման արդյունքների հիմքով: Տեսչական մարմնի հաղորդագրության մեջ ասվում է.

«ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի՝ 2021 թվականի հունիսի 10-ի հանձնարարագրի համաձայն՝ հունիսի 14-18-ը ստուգում էր իրականացվել «Փեթակ» ՍՊ ընկերությունում:

Դրա արդյունքում հայտնաբերվել էին հրդեհային անվտանգության կանոնների 12 խախտումներ: Դրա հիմքով կազմվել էր վարչական արձանագրություն, եւ ընկերության տնօրենը ենթարկվել էր վարչական պատասխանատվության: Բացի այդ, տեսչական մարմնի կողմից ընկերությանը տրվել էր կարգադրագիր՝ հայտնաբերված խախտումները վերացնելու վերաբերյալ: Կարգադրագրի 12 կետերով խախտումները վերացնելու համար սահմանվել էր ողջամիտ ժամկետ: Վերջին կետի կատարման վերջնաժամկետ էր սահմանվել 2022 թվականի հունիսի 23-ը:

Տեսչական մարմնի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 22-ի հանձնարարագրի հիման վրա նախորդ տարի տրված կարգադրագրի պահանջների կատարումը պարզելու նպատակով օգոստոսի 22-25-ը ներառյալ ՏՄ մասնագետները հետազոտություն են իրականացրել ընկերությունում: Արդյունքում պարզվել է, որ նախորդ տարի իրականացված հրդեհատեխնիկական հետազոտության արդյունքում արձանագրված հրդեհային անվտանգության կանոնների խախտումները վերացնելու վերաբերյալ տրված կարգադրագրի պահանջներն ամբողջությամբ չեն կատարվել, եւ խախտումները չեն վերացվել: Նման խախտումներով ընկերության հետագա աշխատանքները կարող են անմիջական եւ ուղղակի սպառնալիք ստեղծել մարդկանց անվտանգության համար:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» կետով եւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմինը որոշում է կայացրել դադարեցնել ՀՀ ք. Երեւան, Արշակունյաց 17ա հասցեում գործող «Փեթակ» ՍՊ ընկերության աշխատանքները»:

Նշենք, որ երեկ «Փեթակ»-ի աշխատակիցները սովորականի պես գնացել են աշխատանքի եւ անակնկալի եկել՝ տեսնելով, որ այն փակ է: Նրանք բողոքի ակցիա են իրականացրել կառավարության շենքի մոտ:

ԾՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԶԵԼ Է

Հայաստանում այս տարվա հունվար-օգոստոսին ծնվածների թիվը պակասել է: ArmLur.am-ը պաշտոնական աղբյուրներից տեղեկացավ, որ մեր հանրապետությունում եթե 2020 թվականի 8 ամիսներին ծնվածների թիվը կազմել է 22 հազար 858, 2021-ի նույն ժամանակահատվածում՝ 23 հազար 478, ապա այս տարվա նույն ժամանակահատվածում այն պակասել է՝ դառնալով 22 հազար 964:

Բացի այս, պակասել է մեռելածինների թիվը՝ մեկ տարվա ընթացքում 324-ից հասնելով 292-ի: Մյուս նորությունը. Հայաստանում սկսել են շատ ամուսնալուծվել, քիչ ամուսնանալ: ՀՀ վիճակագրական կոմիտեից ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հայաստանում այս տարվա հունվար-օգոստոսին ամուսնալուծության դեպքերը կազմել են 2981, այսինքն՝ մեկ տարվա ընթացքում ամուսնալուծություններն ավելացել են 90-ով, իսկ, ահա, ամուսնությունները 2020-ի հունվար- օգոստոս ամիսներին կազմել են 7716, 2020-ին՝ 11262, իսկ այս տարվա նույն ժամանակահատվածում՝ 10 880:

ՍՅՈՒՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 8 ճՏՊ. 2 մարդ զոհվել է, 12-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

«2022 թվականին Սյունիքի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզերում իրականացվել է ուսումնասիրություն, որի արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանում ականներով եւ չպայթած զինամթերքով աղտոտված տարածքների մակերեսը կազմում է 18 310 000 քմ»,- հոկտեմբերի 7-ին ասաց Մարդասիրական ականազերծման փորձագիտական կենտրոնի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Կարինե Հախնազարյանը:

Նա պարզաբանեց, որ Հայաստանի վերը նշված չորս մարզերը համարվում են ամենավտանգավորը չպայթած ականներով աղտոտվածության տեսանկյունից:

Ներկայացված տվյալները վերաբերում են սեպտեմբերի 13-14-ը ադրբեջանական ագրեսիային նախորդող ժամանակաշրջանին:

Նա տեղեկացրեց, որ այս տարի Սյունիքի մարզի Դավիթ Բեկ համայնքում ականներից եւ չպայթած զինամթերքից մաքրվել է ավելի քան 55 000 քմ տարածք:

ՊԱՐԵՆԻ ԳՆԵՐԸ

Պարենի համաշխարհային գները սեպտեմբերին նվազել են վեցերորդ ամիսն անընդմեջ: Այդ մասին ասվում է ՄԱԿ-ի պարենավորման ու գյուղատնտեսական կազմակերպության (ՖԱՕ) մամուլի տեղեկագրում:

«2022 թվականի սեպտեմբերին ՖԱՕ-ի պարենային գների ինդեքսի (ՖՊԳԻ) միջին ցուցանիշը կազմել է 136,3 կետ, ինչը 1,5 կետով (1,1 տոկոս) ցածր է օգոստոսի ցուցանիշից. այսպիսով, դրա նվազումը շարունակվում է վեցերորդ ամիսն անընդմեջ: Չնայած հետագա անկմանը՝ ՖՊԳԻ-ն 7,2 կետով (5,5 տոկոս) բարձր է անցյալ տարվա համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշից»,-ասվում է հաղորդագրության մեջ: Կազմակերպությունը նաեւ գրանցում է ինդեքսների նվազում առանձին պարենային խմբերում: Այսպես, բուսական յուղի գների ինդեքսն օգոստոսի նկատմամբ նվազել է 10,8 կետով կամ 6,6 տոկոսով՝ հասնելով 152,6 կետի, ինչն ամենացածր ցուցանիշն է 2021 թվականի փետրվարից: Դա պայմանավորված է արմավենու, սոյայի եւ արեւածաղկի յուղի գների նվազմամբ: Հացահատիկի գների ինդեքսը, սակայն, աճել է մինչեւ 147,8 կետ (2,2 կետով օգոստոսի նկատմամբ կամ 1,5 տոկոսով): ՖԱՕ-ն դա բացատրում է նոյեմբերից հետո սեւծովյան հացահատիկային նախաձեռնության շարունակվելու հետ կապված աճող անորոշությամբ: Շաքարի գների ինդեքսը սեպտեմբերին օգոստոսի նկատմամբ նվազել է 0,8 կետով կամ 0,7 տոկոսով՝ հասնելով 109,7 կետի: Այդ ցուցանիշը նվազում է հինգերորդ ամիսն անընդմեջ եւ հասել է 2021 թվականի հուլիսից ի վեր ամենացածր ցուցանիշին: Կաթնամթերքի գների ինդեքսն օգոստոսի նկատմամբ նվազել է 0,8 կետով կամ 0,6 տոկոսով՝ հասնելով 142,5 կետի: Կազմակերպությունը դա բացատրում է դոլարի նկատմամբ եվրոյի թուլացմամբ: Մսի գների ինդեքսն օգոստոսի նկատմամբ նվազել է 0,6 կետով կամ 0,5 տոկոսով՝ հասնելով 121,4 կետի: Ամենից շատ նվազել են ոչխարի եւ տավարի մսի գները. հաղորդել է ՌԻԱ Նովոստին:

29 ՈՒՍԱՆՈՂ

ԿՐԹԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ՝ ՏՏ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հայաստանի տարբեր բուհերի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի 29 ուսանող արժանացան տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում ՀՀ վարչապետի կրթական մրցանակների:

Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառը զարգացնելու, կատարելագործելու եւ խրախուսելու նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվել է կրթական 6 մրցանակ: Բուհերի լավագույն ուսանողների, ասպիրանտների եւ աշակերտների համար նախատեսված մրցանակները շնորհվում են ամեն տարի: Այս տարի արդեն 18-րդ անգամ տեղի ունեցավ ուսանողներին կրթական պարգեւների մրցանակաբաշխությունը:

«Ինձ համար պատիվ է այսօր վարչապետի անունից շնորհելու տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում 2022 թվականի կրթական մրցանակները: Գաղտնիք չէ, որ ՏՏ զարգացումը ռազմավարական նշանակություն ունի մեր երկրի համար մերօրյա իրականության մեջ: Մենք զարգացումը կարեւորում ենք ոչ միայն տնտեսական ոլորտի տեսանկյունից, այլ նաեւ դիտարկում ենք որպես բոլոր առանցքային եւ կենսական նշանակություն ունենք ոլորտների զարգացման շարժիչ ուժ, ի վերջո նաեւ մարդկային կապիտալի զարգացման շարժիչ ուժ»,-ասաց փոխվարչապետը՝ ընդգծելով, որ այդ ուսանողներն իրենց գիտելիքներով, ստեղծագործությամբ եւ հմտություններով ստեղծում են վաղվա Հայաստանը:

Ամեն անվանակարգի համար համալսարանները ներկայացնում են 10-ական ուսանողներ: Այս տարի հարցազրույցներին մասնակցել են 6 բուհերի 116 ուսանողներ: Մրցանակի արժանացավ 29-ը, գլխավոր մրցանակ 2022-ին չշնորհվեց: Հանձնվեցին լավագույն բակալավր, լավագույն մագիստրանտ եւ լավագույն ասպիրանտ անվանակարգերում 1-ին եւ 2-րդ կարգի մրցանակներ: Մրցանակակիրներից է նաեւ Հայ-ռուսական համալսարանի 4-րդ կուրսի ուսանող Գիսանե Խաչատրյանը, որը սովորում է Կենսաինժեներայի եւ կենսաինֆորմատիկայի բաժնում: «Մենք ուսումնասիրում ենք կենսաբանական տարբեր հիվանդություններ: Կոնկրետ ես զբաղվում եմ գենետիկական տարբեր հիվանդությունների ուսումնասիրմամբ՝ հենց համակարգչային նոր ծրագրավորման լեզուների օգնությամբ անալիզ անելով»,-ասաց ուսանողը:

Նրա խոսքով՝ մրցույթին մասնակցելու համար պահանջվում է, որ ուսանողն ունենա բարձր ՄՈԳ, տպագրված մի քանի հոդված, ակտիվ ուսանող լինի, որից հետո միայն կարող է անցնել հարցազրույցի փուլը: Ստացած գումարով նա պլանավորում է ծրագրավորման կուրսեր անցնել: Ըստ ուսանողի՝ Հայաստանում հիմա շատ հնարավորություններ կան զբաղվելու ՏՏ ոլորտով եւ կոնկրետ իր՝կենսաինֆորմատիկայի՝այս պահի դրությամբ ոչ այնքան հայտնի մասնագիտությամբ: «Սինոփսիս Արմենիա» ընկերության տնօրեն Հովիկ Մուսայելյանն էլ ընդգծեց, որ տեղեկատվական տեխնոլոգիաները Հայաստանի տնտեսության զարգացման գերակայությունն են: ՀՆԱ-ում ՏՏ-ի տեսակարար կշիռը մոտ 5 տոկոս է կազմում: Հայաստանում այսօր գործում են շուրջ 3000 ՏՏ ընկերություններ, որոնցից շուրջ 2000-ը ստարտափներ են: «Գաղտնիք ասած չեմ լինի, եթե պնդեմ, որ այդ ընկերությունների հիմնական կորիզը կազմում են մեր տաղանդաշատ պատանիները, որոնցից շատերը նաեւ այս մրցանակաբաշխության միջոցով են բացահայտվել եւ խրախուսվել: Այս մրցանակաբաշխությունը կազմակերպելու մեր հիմնական խնդիրն այն էր, որ մենք մեր տաղանդաշատ պատանիներին ուղղորդենք դեպի գիտակրթական ոլորտ, դեպի տեխնոլոգիական ձեռներեցություն»,- ասաց Մուսայելյանը: Նա ընդգծեց, որ «Սինոփսիս»-ի համար շատ կարեւոր է երկրում IT ենթակառուցվածքների զարգացումը: Ընկերությունը նախաձեռնել է մի շարք միջոցառումներ, որոնք նպաստում են ՏՏ ենթակառուցվածքների զարգացմանը Հայաստանում, դրանցից մեկն էլ այս մրցանակաբաշխությունն է: Մրցանակաբաշխությունը «Սինոփսիս»-ը իրականացնում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի հետ համատեղ: «Սինոփսիս» ընկերության նախագահ ու գլխավոր գործառնական տնօրեն Սասին Ղազին էլ հավելեց՝ բավականաչափ չի կարող ընդգծել ՏՏ ոլորտի կարեւորությունը երկրի տնտեսական զարգացման, ինչպես նաեւ ազգային անվտանգության համար. «ՏՏ-ն դառնում է շատ ավելին, քան պարզապես լավ աշխատանքը. այն սկսում է փոխել մարդկանց կենսակերպը, մեր կյանքը: Սա ոլորտ է, որը ոչ միայն ֆինանսական առումով ձեզ կբավարարի, այլ մեծագույն բավարարվածությունը պետք է լինի այն, թե ինչպես եք դուք իսկապես փոխում մարդկանց, տնտեսության, երկրի հաղորդակցման ձեւերը»:

«Լավագույն մագիստրանտ» 1-ին եւ 2-րդ կարգի մրցանակների համար նախատեսված է համապատասխանաբար 750 եւ 500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, յուրաքանչյուր կարգում՝ 6 մրցանակակիր:

«Լավագույն բակալավր» 1-ին եւ 2-րդ կարգի մրցանակների համար նախատեսված է համապատասխանաբար 500 եւ 400 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, յուրաքանչյուր կարգում՝ 6 մրցանակակիր:

«Լավագույն ասպիրանտ» 1-ին եւ 2-րդ կարգի մրցանակների համար նախատեսված է համապատասխանաբար 1000 եւ 750 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, յուրաքանչյուր կարգում՝ 6 մրցանակակիր:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՆԱՉԵ՛Ք ՄԵՐ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Արցախի ԱԺ խմբակցությունները հայտարարություն են տարածել.

«ԴԺՀ-ի, ԼԺՀ-ի, Խերսոնի եւ Զապորոժեի մարզերի ՌԴ-ին վերամիավորման մասին

-Նկատի առնելով Ռուսաստանի Դաշնության կողմից Դոնեցկի Ժողովրդական Հանրապետության եւ Լուգանսկի Ժողովրդական Հանրապետության անկախության ճանաչումը եւ դրան հաջորդած 2022 թ. սեպտեմբերի 30-ին վերոհիշյալ երկրամասերի, Խերսոնի եւ Զապորոժեի մարզերի վերամիավորումը ՌԴ-ին՝ ԱՀ ԱԺ խմբակցությունները արձանագրում են, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը 1991թ. իրավական առումով անթերի իրացրել է ինքնորոշման իր իրավունքը՝ միջազգային իրավունքի նորմերին, ժողովրդավարության սկզբունքներին եւ այդ ժամանակ գործող ԽՍՀՄ օրենսդրությանը համապատասխան:

-Միջազգային հանրությունը Ադրբեջանը ճանաչել էր որպես անկախ պետություն ԽՍՀՄ ներքին օրենսդրությամբ որոշված սահմաններում: Ըստ այդ օրենսդրության՝ Ադրբեջանի անկախության ձեռք բերման ժամանակ Լեռնային Ղարաբաղը տվյալ երկրի հետ որեւէ առնչություն չուներ, այլապես նա չէր ընդգրկվի ՄԱԿ-ի կազմում, ուստի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը ոչ մի կապ չունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ:

-Ընդունելով ՄԱԿ կանոնադրության առաջին հոդվածում ամրագրված ժողովուրդների իրավահավասարության եւ ինքնորոշման սկզբունքը եւ Արդարադատության միջազգային դատարանի 2010թ. հուլիսի 22-ի վճիռը, ըստ որի՝ միջազգային իրավունքը չի արգելում այնպիսի անկախության հռչակումը, ինչպիսին Կոսովոյում էր, ԱՀ ԱԺ խմբակցությունները կոչ են անում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրներին՝ Ռուսաստանի Դաշնությանը, Ամերիկայի Միացյալ Նահանգներին, Ֆրանսիային եւ ՄԱԿ անդամ մյուս 190 պետություններին ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ դրանով իսկ ի չիք դարձնելով նրա բնակչության առջեւ ծառացած գոյաբանական լրջագույն սպառնալիքները:

«Ազատ հայրենիք-ՔՄԴ»
«Միասնական հայրենիք»
«Արդարություն»
«Հայ հեղափոխական դաշնակցություն»
«Արցախի ժողովրդավարական կուսակցություն»»

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ԻՆՉՈ՞Ւ Է ԿՐՃԱՏՎԵԼ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ

Հայաստանում գրադարանների թիվը զգալի կրճատվել է: Նախորդ տարվա տվյալների համաձայն՝ հաշվառված է եղել 649 գրադարան, որից 12-ը ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայության պետական գրադարաններ են, 629-ը՝ համայնքային: Նախարարության վերջին տվյալների համաձայն՝ համայնքային գրադարանների թիվը դարձել է 370: Այս մասին նշեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության մշակութային ժառանգության եւ ժողովրդական արհեստների վարչության գլխավոր մասնագետ Նազիկ Հովասափյանը:

Գրադարանների թվի կրճատումը հիմնականում պայմանավորված է համայնքների խոշորացմամբ: Վերջին շրջանում մի քանի փուլով իրականացվեց համայնքների խոշորացում, եւ դրան զուգահեռ որոշ գրադարաններ փակվեցին: Սա շատ լուրջ խնդիր է, եւ մենք փորձում ենք ինչ-որ ձեւով աջակցել համայնքային գրադարաններին:

Համայնքային գրադարաններն հենց համայնքների հոգածության ներքո են գործում: Եվ քանի որ համայնքները ֆինանսապես ապահովված չեն, հետեւաբար չեն կարողանում պահպանել գրադարանի բնականոն գործունեությունը: Համայնքային գրադարանների մի մասը իրենց գրքերի հավաքածուները հանձնում են դպրոցներին, մի մասը դեռ պահում են, մինչեւ խնդրին լուծում կտրվի:

Խոսելով գրադարանների առջեւ ծառացած մարտահրավերներից՝ Գեղարքունիքի մարզային գրադարանի տնօրեն Մարիամ Համբարձումյանը նշեց, որ ամենակարեւորը ժամանակակից տեխնոլոգիաներով համալրումն է, որպեսզի կարողանան ժամանակին համահունչ բավարարել ընթերցողների պահանջարկը: Դրանից բացի, առաջնային է նոր գրականությամբ համալրումը:

Թյուր կարծիք է, որ գրադարաններում այցելությունների թիվը կրճատվել է: Գրադարաններն ամեն ինչ անում են, որ ընթերցողներին ներգրավեն: Միջոցառումները բազմազան են՝ գրքերի շնորհանդեսներ, գրողների հետ հանդիպումներ, բանավեճեր, քննարկումներ: Այսօր նաեւ մեր խնդիրն է գրապահոցները համալրել նոր, ժամանակակից գրականությամբ:

Գրադարանները գրքերով համալրելու խնդիրը բարձրաձայնեց նաեւ Շիրակի մարզային գրադարանի տնօրեն Գեւորգ Ամիրյանը: Նա տեղեկացրեց, որ պետության կողմից սուբսիդավորման գումարը կրկնապատկվել է, ինչը որոշակի խնդիրը լուծում է, սակայն դիմում են նաեւ այլ միջոցներին՝ բարեգործություն, նվիրատվություն:

Այստեղ հրատարակիչներն էլ անելիք ունեն: Պետք է հրատարակեն այնպիսի գրականություն, որ իսկապես հետաքրքրիր է ընթերցողներին, եւ այն, ինչ պահանջված է: Կոնկրետ կրթական ծրագրերին վերաբերող գրականություն չենք կարողանում գրախանութներում ճարել, վաճառքում չկան մասնագիտական գրքեր:

Խոսելով համալրումների խնդրից՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության մշակութային ժառանգության եւ ժողովրդական արհեստների վարչության գլխավոր մասնագետ Նազիկ Հովասափյանը տեղեկացրեց, որ նախարարության ենթակայության տակ գործող մարզային գրադարաններին տարեկան 2 մլն դրամ է հատկացվում նոր գրականություն ձեռք բերելու համար: Տարբեր ծրագրերի շրջանակում փորձում են աջակցել նաեւ համայնքային գրադարաններին:

ԼՈՒՐԵՐ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Դիրիժոր Թեոդոր Կուռենտզիսի ղեկավարությամբ musicAeterna նվագախումբն ու երգչախումբը հոկտեմբերի 14-17-ը առաջին անգամ ելույթ կունենան Հայաստանում:

Ինչպես հայտնում են ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից, նախագիծն իրականացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների մասնակցությամբ:

Կոլեկտիվի հայաստանյան հյուրախաղերը տեղի են ունենում Վարդուհի Նազարյանի նախաձեռնությամբ:

Նախագծի կազմակերպիչը Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը եւ «Արամ Խաչատրյան» համերգասրահն են:

Առաջին համերգը կկայանա հոկտեմբերի 14-ին՝ ժամը 19:30-ին, «Արամ Խաչատրյան» համերգասրահում:

Ծրագիր՝

Պյոտր Իլյիչ Չայկովսկի՝ «Ֆրանչեսկա դա Ռիմինի» սիմֆոնիկ ֆանտազիա (ըստ Դանթեի),

Իտալական կապրիչո,

«Ռոմեո եւ Ջուլիետ» նախերգանք-ֆանտազիա (ըստ Շեքսպիրի):

Շրջագայության ծրագրի գագաթնակետն է հոկտեմբերի 16-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում ժամը 19:30-ին կայանալիք Ալֆրեդ Շնիտկեի Երգչախմբային կոնցերտի կատարումը:

ԴԱՏԻ ԵՆ ՏՎԵԼ

Արքայազն Հարրին եւ երգիչ Էլթոն Ջոնը դատի են տվել բրիտանական Associated Newspapers հրատարակչությանը (որը թողարկում է Daily Mail թերթը) անձնական կյանք ներխուժելու համար:

Հայցեր են ներկայացրել նաեւ դերասանուհիներ Էլիզաբեթ Հերլին եւ Սադի Ֆրոստը, ինչպես նաեւ ակտիվիստ բարոնուհի Դորին Լոուրենսը:

Hamlins իրավաբանական ընկերությունը ներկայացնում է Հարրի եւ Ֆրոստի շահերը: Հայտարարության մեջ ասվում է, որ նրանք «զարհուրելի հանցավոր գործունեության եւ գաղտնիության իրավունքի կոպիտ խախտումների զոհ են դարձել»:

Gunnercooke-ը, որը ներկայացնում է Ջոնին, Հերլին եւ Լոուրենսին, նույնպես երեք առանձին հայց է ներկայացրել հրատարակչության դեմ «անձնական տեղեկատվության չարաշահման համար»:

Ըստ Variety-ի՝ Associated Newspapers-ը, իբր, վարձել է մարդկանց՝ հայտնի անձանց մեքենաներում եւ տներում գաղտնալսող սարք տեղադրելու, նրանց հեռախոսային խոսակցությունները լսելու եւ որոշ իրավապահների վճարելու՝ նրանց մասին տեղեկություններ տրամադրելու համար:

Նաեւ, ըստ հայցվորների փաստաբանների, հրատարակչության կողմից աշխատանքի ընդունված անձինք, իբր, «ապօրինի միջոցներով» մուտք են գործել բանկային հաշիվներ:

ԼՈՒՐԵՐ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԹՈՂԱՐԿՎԻ

Ռոբ Շնայդերը հայտարարել է 2001 թվականի «Կենդանին» գիտաֆանտաստիկ կատակերգության շարունակության մասին:

Շարունակությունը կթողարկվի Tubi հոսքային ծառայությունում: Շնայդերը կկրկնի ոստիկան Մարվին Մանգեի դերը, ում կենդանիների տարբեր օրգաններ են փոխպատվաստել: Նա նաեւ կգրի սցենարը եւ հանդես կգա որպես նախագծի պրոդյուսեր եւ ռեժիսոր:

Սիքվելում Մարվինը կանցնի թոշակի, բայց նա եւս մեկ անգամ պետք է օգտագործի իր հին հմտությունները, երբ հանդիպի մի կենդանու, որը գերազանցում է իր կարողությունները:

ՀԱՆՎԵԼ ԵՆ ԵԹԵՐԻՑ

Ռուսաստանում ռադիոկայանների եթերից հանվել են Ուկրաինային հրապարակայնորեն աջակցած կատարողների ստեղծագործությունները: Այս մասին հայտնում են ռուսական լրատվամիջոցները: Այժմ ռուսները տեղական ռադիոյով չեն լսի Ալլա Պուգաչովայի երգերը, որն իր ամուսնու՝ Մաքսիմ Գալկինի հետ Ուկրաինայում ռուսական հատուկ օպերացիայի մեկնարկից անմիջապես հետո մեկնել է Իսրայել եւ դատապարտել է Ռուսաստանի իշխանությունների այդ որոշումը:

Մոսկվայի ռադիոկայաններից մեկի խմբագիրը, որը ցանկացել է անհայտ մնալ, նշել է, որ Կոնստանտին եւ Վալերի Մելաձեների ստեղծագործությունները հանվել են եթերից: Արգելքի տակ են նաեւ Պոլինա Գագարինայի, «Վիա Գրա» խմբի եւ մոտ մեկ տասնյակ այլ երաժիշտների երգերը, որոնք համագործակցում էին Մելաձե եղբայրների հետ:

«Սեւ ցուցակում» են ընդգրկվել նաեւ ամերիկացի աստղերը, մասնավորապես՝ Մադոննան ու Լեդի Գագան այլեւս չեն հնչի ռուսական ռադիոկայանների եթերում, քանի որ երգչուհիները հրապարակավ դատապարտել են Ռուսաստանի Դաշնության իշխանություններին, իսկ Լեդի Գագան նույնիսկ համերգի ժամանակ ռուսներին հիմար է անվանել:

ԾՆԿԻ ՎՆԱՍՎԱԾՔ

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի 35-ամյա արգենտինացի հարձակվող Լիոնել Մեսին ծնկի վնասվածք է ստացել պորտուգալական «Բենֆիկայի» դեմ Չեմպիոնների լիգայի երրորդ տուրի խաղում (1:1):

Այդ խաղում Մեսին դարձել էր գոլի հեղինակ: Նա փոխարինվել էր 81-րդ րոպեին: Մեսին էր խնդրել թիմի ֆրանսիացի գլխավոր մարզիչ Կրիստոֆ Գալտիեին փոխարինել իրեն:

Վնասվածքը ծանր չէ, սակայն Մեսին, ամենայն հավանականությամբ, բաց կթողնի «Ռեյմսի» դեմ Ֆրանսիայի առաջնության հաջորդ տուրի հանդիպումը, որը տեղի կունենա հոկտեմբերի 8-ին:

● *Հոկտեմբերի 15-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Սառցե սիրտը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 12:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ պատասխանատվություն է սահմանված հրդեհային անվտանգության կանոնները խախտելու կամ չկատարելու համար:

Իվան Դանիելյան (31 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հրդեհային անվտանգության կանոնները խախտելու կամ չկատարելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 187-րդ հոդվածով սահմանված է պատասխանատվություն, այն է՝

հիմնարկներում, կազմակերպություններում, կոլտնտեսություններում, հասարակական վայրերում, պահեստային շենքերում, հանրակացարաններում եւ բնակելի տներում, ինչպես նաեւ համապատասխան օբյեկտներ նախագծելիս եւ կառուցելիս հրդեհային անվտանգության կանոնները խախտելը կամ չկատարելը կամ հակահրդեհային գույքի, սարքավորումների, հրդեհները հայտնաբերելու եւ հանգցնելու ավտոմատ միջոցների օգտագործման ու պահպանության կանոնները խախտելը

-առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկից հիսնապատիկի չափով:

Սույն հոդվածի առաջին մասի դիսպոզիցիայում նշված խախտումները վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը

-առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրիհիսնապատիկի չափով:

Պետական հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչության պաշտոնատար անձանց կողմից տրված կարգադրագրերում նշված ժամկետում թույլ տրված հրդեհային անվտանգության կանոնների խախտումները չվերացնելը

-առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրիհիսնապատիկի չափով:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ արտադրական վտանգավոր օբյեկտը ռեեստրում գրանցման չներկայացնելն ու տեխնիկական անվտանգության փորձաքննություն չանցկացնելն առաջացնում են տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով (այսինքն՝ մեկ միլիոն դրամ):

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ կարող է ուսուցիչը դիմել տարակարգ ստանալու համար:

Հասմիկ Սիրեկանյան (27 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. ««Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2022 թ. փետրվարի 9-ի ՀՕ-35-Ն օրենքը ուժի մեջ է մտել 2022 թ. մարտի 3-ից, որով սահմանվել են փոփոխություններ նաեւ ուսուցիչների տարակարգի շնորհման գործընթացում:

Համաձայն վերոգրյալ օրենքի պահանջների՝մարտի 3-ից սկսած՝ տարակարգի շնորհման գործընթացը կիրականացվի կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից օրենքով սահմանված ենթաօրենսդրական իրավական ակտն ընդունելուց հետո, որով կսահմանվեն տարակարգի շնորհման համար ուսուցչի մասնագիտական չափանիշները:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է հետեւել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կայքէջին եւ տարակարգի շնորհման համար դիմում ներկայացնել ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունումից հետո:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». 2021-2022 ուսումնական տարվանից հանրակրթական ուսումնական հաստատության պետական ավարտական փաստաթուղթը տրվելու է էլեկտրոնային եղանակով: Ավարտական փաստաթղթի նմուշը հաստատվել է ՀՀ կառավարության 2000 թվականի հունիսի 15-ի N320 որոշմամբ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Դավիթաշեն կամրջի սկզբնամասում բախվել են Երեւանի բնակիչներ 29-ամյա Ա. Պապոյանի վարած Ford մակնիշի եւ 37-ամյա Դ. Թամամյանի վարած Lexus մակնիշի ավտոմեքենաները: Տուժածներ չկան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **7.10.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԳ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: